**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ, ՊԱՐԱԳԱՆԵՐԻ և ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՀԱՊՁԲ-2020/15-9-ԵՊԲՀ-2»**

ք. Երևան «  »  2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա. Ա.Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդտեխսերվիս» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է «Մեդտեխսերվիս»ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետնյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 839640(ութ հարյուր երեսուն ինը հազար վեց հարյուր քառասուն)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17291]Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում** իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20][32]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **18** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում,**

իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[243]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_______________________________

(ստորագրությունը)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Լեռ-12
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

---------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.10 18:46:07 AMST

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.07.09 16:05:55 GMT+04:00

---

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Հավելված N 1*
*«     »          2020թ. կնքված*
*«ԳՀԱՊՁԲ-2020/15-9-ԵՊԲՀ-2» ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը և արտադրողի անվանումը** | տեխնիկական բնութագիրը*** | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը**** |
| 15 | 33141212/533 | Ադհեզիվ համակարգ | CharmBond DENTKIST, INC. KOREA | Ադհեզիվ համակարգ լուսային կարծրացման կոմպոզիտների հետ կիրառման համար երկուսը մեկում, 5 մլ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆորմատ՝հատ: Նոր չօգտագործված: | հատ | 4500 | 27000 | 6 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 30 | 33131220/501 | Ատամնաբուժական ունելի | ЗАО “СТРУМ” Беларусь | Ատամնաբուժական ունելին իրենից ներկայացնում է թերապևտիկ ստոմատոլոգիայում կիրառվող, թեքված անկյան տակ, եզրերով,մետաղական գործիք: ֆորմատ՝հատ: Նոր , չօգտագործված: | հատ | 900 | 1800 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 37 | 33141100/502 | Բամբակե գլանակ | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Բամբակե գլանակ, որը նախատեսված է ատամը թքից մեկուսացնելու համար: Կազմված է 100%-անոց բամբակից, հաստությունը՝ 10մմ, երկարությունը՝ 38մմ: | հատ | 2.6 | 8060 | 3100 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ֆորմատ՝ 1 հատ բամակե գլանակ/հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | | սահմանված քանակներով | |
| 40 | 33141212/537 | Գիպս սուպեր | Kromotypo3 LASCOD S.p.A. ITALY | Սուպեր գիպս բժշկական:Պրոթեզների և օրթոդոնտիկ մոդելների ստացման համար:Տուփի պարունակությունը՝ 1 կգ : 3-րդ կարգի գիպս: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առակայություն: | հատ | 1320 | 19800 | 15 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 41 | 33131160/519 | Գնդաձև տեխնիկական բոռ | MANI JAPAN | Գնդաձև տեխնիկական բոռեր: Ֆորմատ՝ 1 հատ բոռ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 360 | 1080 | 3 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 54 | 33141193/531 | Դիսկ մոդել կտրելու համար | HANGZHOU LIANDONG IMPORT & EXPORT CO.,LTD China | Դիսկ մոդել կտրելու համար, հաստությունը 0.26մմ, տրամագիծը 37մմ, նախատեսված է բոր մեքենայի համար: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 250 | 750 | 3 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 58 | 33141121/556 | Թել մետաքս N 4/0, ծակող ասեղով | HANGZHO U LIANDON G IMPORT & EXPORT CO.,LTD | Թել մետաքս N4/0, ծակող ասեղով, ստերիլ: Ասեղը բարձր որակի չժանգոտվող մետաղից՝ 25-26 մմ, թելի երկարությունը՝ 75սմ: Ֆորմատ՝ 1 հատ թել ասեղով: Նոր, | հատ | 220 | 3300 | 15 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | China | չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-րդի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր է: | | | | | | սահմանված քանակներով | |
| 61 | 33141211/692 | Լուսակարծրացող թիթեղներ | Individo Lux VOCO GmbH Germany | Ատամնատեխնիկական լուսակարծրացող պլաստմասայից թիթեղներ, որոնցից պատրաստում են ինդիվիդուլ դրոշմագդալներ: ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: | հատ | 525 | 21000 | 40 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 64 | 33141211/693 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ գավաթաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Կոմպոզիտ և ատամների փայլեցման խոզանակ արհեստական մազերից, գավաթաձև աշխատանքային գլխիկով: ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված: | հատ | 100 | 2500 | 25 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 65 | 33141211/694 | Կոմպոզիտ փայլեցնող խոզանակ կոնաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Կոմպոզիտ և ատամների փայլեցման խոզանակ արհեստական մազերից, կոնաձև աշխատանքային գլխիկով: ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված: | հատ | 100 | 2500 | 25 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 66 | 33141211/695 | Կոմպոզիտ փայլեցնող սիլիկոնե գլխիկ գլանաձև | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Փայլեցնող գլանաձև սիլիկոնե գլխիկ նախատեսված լցանյութի փայլեցման համար: ֆորմատ՝հատ: Նոր, | հատ | 100 | 2500 | 25 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | չօգտագործված: | | | | | | կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | |
| 67 | 33131160/520 | Կոմպոզիտ փայլեցնող սկավառակների լրակազմ Диски шлифовальные | ЛАТУС ЧП УКРАИНА | Հարթեցման սկավառակների հավաքածու, տարբեր գույների սկավառակներ ըստ հղկելու մակարդակի: ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված: | հատ | 3850 | 38500 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 68 | 33141193/534 | Կորբուրունդային քար | ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Կորբուրունդային քար, կիրառվում է տեխնիկական, մետաղական կլամեր կտրելու համար: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 500 | 1500 | 3 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 70 | 33141194/516 | Հեղուկ լցանյութ լուսակարծրացնող | Charmfill flow<br><br>DENTKIST, INC. KOREA | Լուսային կարծրացման հեղուկ լցանյութ՝ բարձրորակ՝ 2 գր: 12 գույներից ընտրելու հնարավորություն (գույներն են՝ A1, A2, A3, A3.5, A4, B1, B2, B3, D3, M5, Super White, Transparent): Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 2800 | 224000 | 80 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 72 | 33141212/541 | Հոսուն –ֆլոու կոմպոզիտ | Latelux flow ЛАТУС ЧП УКРАИНА | Ներարկիչ՝ 2 մլ լուսային կարծրացման հոսուն կոմպոզիտ: ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված:Հանձնելու պահին պիտանիության | հատ | 2200 | 13200 | 6 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ժամկետը 2/3 առկայություն: | | | | | | համաձայնագրով սահմանված քանակներով | |
| 73 | 33141211/696 | Մատրիցաներ թիթեղանման | ЛАТУС ЧП УКРАИНА | Պոլիեթիլենային կաղապար, թափանցիկ :ֆորմատ՝հատ: | հատ | 13 | 1300 | 100 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 76 | 33141200/501 | Միջատամնային հատուկ թել-ֆլոս | Dental Floss DR. SMITH China | Միջատամնային հատվածները մաքրելու համար նախատեսված թել-ֆլոս: Թելի երկարությունը՝ 50 մետր: ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: | հատ | 700 | 3500 | 5 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 78 | 33141212/542 | Յուղ ծայակաների յուղման համար | APPLEDENT AL CHINA | Յուղ ծայրակալի յուղման համար, ալյումինե տարրայով: Պարունակությունը՝ 500մլ յուղ: Նախատեսված է ծայրակալները յուղելու համար: Նոր, չօգտագործված: Ֆորմատ՝ հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 3950 | 63200 | 16 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 79 | 33141193/536 | Նրբասղոցի ատամիկներ (կարճ) | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Նրբասղոցի ատամիկներ (կարճ): Մանր սղոցիկի ատամիկներով մետաղյա ձողեր: Երկարությունը՝ 13 սմ: Ֆորմատ՝ 1 հատ նրբասղոցի ատամիկ/հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի | հատ | 250 | 750 | 3 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առկայություն: | | | | | | | |
| 80 | 33141211/697 | Շաղախման թաս գիպսի և ալգինատի համար | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Շաղախման թաս գիպսի և ալգինատի համար: Չափսը՝մեծ: ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված | հատ | 800 | 8000 | 10 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 87 | 33141193/537 | Ռետինե հղկիչ | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Պատրաստված է ոչ տոքսիկ ռետինից, նախատեսված է պլոմբի փայլեցման և հարթեցման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 100 | 1000 | 10 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 88 | 33131320/507 | Սեպեր մատրիցաների համար | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Փայտե սեպեր, ասորտի տարբեր հաստության, նախատեսված են միջատամնային կոնտակտը լցավորման ժամանակ ճիշտ ձևավորելու համար : ֆորմատ՝հատ: Նոր , չօգտագործված: | հատ | 15.5 | 4650 | 300 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 89 | 33141212/544 | Սիլիկոնային դրոշմանյութ լրակազմ | Ormakit MAJOR PRODOTTI DENTARY SPA ITALY | Սիլիկոն -դրոշմանյութ կոմպլեկտ՝ C սիլիկոն 1 շերտ՝ 900գ, 2 շերտ՝ 150 մլ, կատալիզատոր՝ 60 մլ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆորմատ՝հատ: | հատ | 12950 | 77700 | 6 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 90 | 33141212/545 | Սիլիկոնի երկրորդ շերտ +կատալիզատոր | Silaxil+Enersyl ЛАТУС ЧП УКРАИНА | Սիլիկոնի II շերտ՝ 160մլ և կատալիզատոր՝ 60մլ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Մատակարարման պահին | հատ | 6900 | 103500 | 15 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ապրանքի պիտանելիության ժամկետի 2/3 -ի առկայություն: | | | | | | կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | |
| 91 | 44921100/504 | Սպիտակ գիպս | AMED IRAN | Սպիտակ գիպս, որը սպիտակ փոշի է: Կիրառվում է ստոմատոլոգիայում տեխնիկական աշխատանքների կատարման համար: Ֆորմատ՝ 1 կգ սպիտակ գիպս: Փաթեթավորումը՝ պարկում՝ 50կգ: Նոր, չօգտագործված: Մատակարարման պահին ապրանքի պիտանելիության ժամկետի 2/3 -ի առկայություն: | կգ | 150 | 37500 | 250 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 92 | 33131280/503 | Վիրաբուժական մկրատ | GIMA S. p. A. Italy | Մկրատ վիրաբուժական մետաղական: Նախատեսված է կար քանդելու համար:Չափս-փոքր: ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: | հատ | 1500 | 6000 | 4 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 93 | 33131310/501 | Վիրաբուժական նրբունելի | ОАО “МИЗ-ВОРСМА” РФ | Վիրաբուժական գործիք մետաղական, թաթիկավոր: ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: | հատ | 2500 | 5000 | 2 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 94 | 33131140/504 | Տեխնիկական խոզանակ փափուկ | ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Տեխնիկական խոզանակ փափուկ՝ պուշոկ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին | հատ | 1000 | 3000 | 3 | ք. Երևան, Կորյուն ի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | |
| 96 | 33141211/699 | Ցեմենտ շաղախելու ապակի | ООО «ТД ВЛАДМИВА» РФ | Շաղախման ապակի - Պատրաստված է ապակուց 10սմx7սմ, նախատեսված է ցեմենտի շաղախման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: | հատ | 300 | 108000 | 360 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 98 | 33131140/505 | Փայլեցման խոզանակ | MELBUR INDUSTRIES CO., LIMITED (Dochem) China | Փայլեցման խոզանակ, արտադրվում է սինթետիկ մազից, նախատեսված է պլոմբի հարթեցման և հղկման համար: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: | հատ | 100 | 30500 | 305 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 99 | 33141193/538 | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր | ЛАТУС ЧП УКРАИНА | Փայլեցման ռետին տեխնիկական, կլոր: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Նոր չօգտագործված: | հատ | 350 | 1750 | 5 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |
| 100 | 33141212/546 | Փայլեցնող մածուկ | ALPHA-PRO Dental Technologies, Inc. USA | Փայլեցնող մածուկ՝ ատամների պրոֆիլակտիկ մաքրման համար: Աբրազիվ մածուկ է, տարբեր համերի: Տարայի պարունակությունը՝ 2գ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության | հատ | 80 | 16800 | 210 | ք. Երևան, Կորյունի 2 | Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված քանակներով | - |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ժամկետի 1/2-ի առկայություն: | | | | | | | |

* Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020 թվականի դեկտեմբերի 25-ը: Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

**** Մատակարարումն իրականացվելու է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
_______________________________
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.10 18:46:38 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Լեռ-12
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Տնօրեն՝ Ա. Մանուկյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.07.09 16:06:21 GMT+04:00

*Հավելված N 2*
*«        »              20  թ. կնքված*
*«ԳՀԱՊՁԲ-2020/15-9-ԵՊԲՀ-2»   ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20   թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախափեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** Հրավերում գումարները նշվում են տոկոսով:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

________________________
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.10 18:47:08 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդտեխսերվիս» ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Լեո-12
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2020.07.09 16:06:37 GMT+04:00

*Հավելված N 3*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ______________________________ |
| ____________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը _________________ |
| հհ __________________________ | հհ____________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ___________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝    __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » «     » 20     թ. դուրս գրված N ___   հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ___________________________ | ___________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ___________________________ | ___________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«        »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ    N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________________
Գնորդի անվանումը                                                Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20     թ. __________________________ -ին կնքված N _______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                         պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ___________________________<br>ազգանուն, անուն | ___________________________<br>ազգանուն, անուն |
| ___________________________<br>Ստորագրություն | ___________________________<br>ստորագրություն |